ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ուշադրություն

Յուրաքանչյուր ընտանիք պետք է ներկայացնի նշված փաստաթղթերից իր ընտանիքի կազմը, սոցիալական վիճակը, եկամուտները բնութագրող անհրաժեշտ փաստաթղթերը:

Անհրաժեշտ, սակայն չներկայացված փաստաթղթերը դիմում-հայտարարագիրը լրացնելուց ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրերի ընթացքում ներկայացնելու դեպքում դիմելու օր կհամարվի դիմում-հայտարարագիրը լրացնելու օրը: Նշված ժամկետից հետո ներկայացնելու դեպքում դիմելու օր կհամարվի բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու օրը:

ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՂՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԸ

- ***Դիմում-հայտարարագիր***
- ***Տեղեկանք տեղական ինքնակառավարման մարմնից կամ այլ իրավասու մարմնից***
- ***3-րդ եւ 4-րդ ասպիճանի վթարային բնակարանի համար ՀՀ քաղաքաշինության նախարարության լիազորած մասնագիտացված կազմակերպության կամ այդ կազմակերպությունից ստացված համապատասխան եզրակացության հիմքով տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տրված տեղեկանք***
- ***Անձնագրի կամ ծննդյան վկայականի պատճեն***
- ***Ծնողի կամ ծնողների մահվան վկայականների պատճենները կամ դատարանի վճռի պատճեն՝ ծնողի մահացած ճանաչելու մասին***
- ***Տեղեկանք խնամակալության եւ հոգաբարձության մարմնից՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա հաշվառելու մասին***
- ***Ամուսնալուծության վկայականի կամ դատարանի վճռի կամ հայրության որոշման վկայականի պատճեն***
- ***Սոցիալական քարտի պատճեն կամ սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանքը***
- ***Տեղեկանք աշխատավայրից՝ աշխատավարձի չափի մասին***
- ***Աշխատանքային գրքույկի պատճեն, իսկ երբեւէ չաշխատած անձի համար, որը չունի աշխատանքային գրքույկ, նաեւ գրավոր հայտարարություն այդ մասին***
- ***Տեղեկանք ուսումնական հաստատությունում կերեկային ուսուցմամբ սովորելու մասին***
- ***Տեղեկանք կենսաթոշակ նշանակող իրավասու մարմնից***
- ***Տեղեկանք զբաղվածության տարածքային կենտրոնից***
- ***ԲՍՓՀ-ի կողմից տրված հաշմանդամության տեղեկանքի պատճեն***
- ***Միայնակ մոր երեխայի ծննդյան վկայականի, որում հոր տվյալներին վերաբերող դողում չկա որեւէ գրանցում, պատճեն, մնացած դեպքերում տեղեկանք քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնից, որ հոր մասին տվյալները լրացված են մոր կողմով, ՀՀ-ից դուրս ծնված՝ Հայաստանում բնակվող երեխաների համար, այդ պետություններում սահմանված կարգով տրված համապատասխան տեղեկանքներ***
- ***Տեղեկանք համապատասխան բուժհաստատությունից՝ 12 շաբաթական եւ ավելի հղիության վերաբերյալ***
- ***Տեղեկանք զինկոմիսարիատից՝ բանակ զորակոչվելու կապակցությամբ***
- ***Տեղեկանք տրված ՀՀ պաշտպանության նախարարությունից կամ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից կամ ՀՀ ոստիկանությունից կամ ՀՀ արտակարգ իրավիճակների վարչությունից՝ ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած, ինչպես նաեւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողների ընտանիքներին «Զինծառայողների եւ նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով սահմանված սոցիալական ապահովության իրավունքներից եւ երաշխիքներից օգտվելու մասին***
- ***Փաստաթուղթ՝ 6 ամիս եւ ավելի Հայաստանի Հանրապետությունից դուրս բնակվելու մասին***
- ***Հայտարարություն եւ տեղեկանք միայնակ, չաշխատող կենսաթոշակառուի վերաբերյալ***
- ***Տեղեկանք խնամատար հաստատությունից***
- ***Էլեկտրաէներգիայի վարձի վճարման անդորրագրի պատճեն***
- ***Գազի վարձի վճարման անդորրագրի պատճեն***
- ***Այլ փաստաթղթեր***

Սույն փաստաթղթի պատրաստումը հնարավոր է դարձել Ամերիկյան ժողովրդի աջակցության շնորհիվ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով՝ Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագրի շրջանակներում: Արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին եւ հնարավոր է, որ չհամընկնեն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ Կառավարության տեսակետների հետ: